Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.6/[83327]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Կ. Կարապետյան	Երևանի քաղաքապետ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Լ. Հակոբյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Հրավիրվածներ ՝

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ֆ. Բաշոյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ա. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական

	վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Կ. Բաղալյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Հ. Ավետիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ներդրումային քաղաքականության վարչության պետ
Ա. Բաղալյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ
Ա. Բարսեղյան	Հայաստանում Ասիական զարգացման բանկի մշտական առաքելության ղեկավար
Գ. Մուսայելյալ	Ասիական զարգացման բանկի ծրագրերի ավագ պատասխանատու
Ռ. Ռոմասանտա	Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի քաղաքային ծառայությունների ծրագրի պատասխանատու
Ա. Դոֆին	Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի քաղաքային զարգացման բաժնի մասնագետ
Ն. Հաջյան	թարգմանիչ

1. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակում մշակված Երևան քաղաքի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհային հանգույցի նախագծման, շինարարության կառավարման և վերահսկման աջակցության խորհրդատուի տեխնիկական առաջադրանքի (TOR) շրջանակի և մրցույթի հետաքրքրության հայտ (EOI) ներկայացնելու հայտարարության հաստատում

(Ա. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի քաղաքային զարգացման բաժնի մասնագետ Ա. Դոֆինի զեկույցը.

2) հաստատել «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակում մշակված Երևան քաղաքի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհային հանգույցի նախագծման, շինարարության կառավարման և վերահսկման աջակցության խորհրդատուի տեխնիկական առաջադրանքի (TOR) շրջանակի և մրցույթի հետաքրքրության հայտ (EOI) ներկայացնելու հայտարարության վերաբերյալ առաջարկը.

3) հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ա. Բաղալյանին՝ ներկայացված հարցի հետագա փուլերի ժամանակ կառավարման խորհրդին ներկայացնել ԱԶԲ-ի հետ վերջնական համաձայնեցված առաջարկ (միասնական կարծիք):

2. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում մշակված տեխնիկական առաջադրանքների հիման վրա հայտարարված մրցույթների գնահատման հանձնաժողովի կազմի հաստատում

(Ա. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում մշակված տեխնիկական առաջադրանքների հիման վրա հայտարարված մրցույթների գնահատման հանձնաժողովի կազմը՝ դրանում ընդգրկելով՝

ա. Հայաստանի ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Ա. Հաջյանին,

բ. Երևանի քաղաքապետարանի 2 ներկայացուցիչ,

գ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մեկ ներկայացուցիչ,

դ. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության մեկ ներկայացուցիչ,

ե. ՀՀ տարածքային կառավարման նախարարության մեկ ներկայացուցիչ,

զ. ՀՀ քաղաքաշինության նախարարության մեկ ներկայացուցիչ.

2) հանձնարարել ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանին, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին, ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին և առաջարկել Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանին, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ա. Բաղալյանին Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում մշակված տեխնիկական առաջադրանքների հիման վրա հայտարարված մրցույթների գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով 2-օրյա ժամկետում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել համապատասխան թեկնածություններ:

3. Քաղաքային կայուն զարգացման ծրագրի մասով կառավարման խորհրդի քարտուղարի նշանակում

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ Քաղաքային կայուն զարգացման ծրագրի մասով կառավարման խորհրդի քարտուղար նշանակել ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ